ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2024թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԽԱՆԴԻԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար բեմադրիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Սամվելի Խանդիկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԽԱՆԴԻԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արմեն Խանդիկյանը ծնվել է 1946 թվականին, Բեյրութում:

1947 թվականին հայրենադարձել է: 1965-1970 թվականներին սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական բաժնում:

1968 թվականին ընդունվել է Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն՝ որպես դերասան:

1971 թվականին բեմադրել է առաջին ներկայացումը՝ Ժ. Անույի «Ուղևորն առանց ծանրոցի»:

1980 թվականին բեմադրել է Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը, Համլետի դերում հանդես է եկել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վլադիմիր Մսրյանը: Այս բեմադրությունն արժանացել է անվանի շեքսպիրագետների բարձր գնահատանքին:

1985 թվականին Մոսկվայի Մոսսովետի անվան թատրոնում բեմադրել է Ալեքսանդր Պուշկինի «Փոքրիկ ողբերգությունները»:

1986-1989 թվականներին եղել է Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսորը, 1989 թվականից մինչ օրս թատրոնի գեղարվեստական ղեկավարն է:

1988 թվականին Մոսկվայում «Ավտոբուս» ներկայացման համար արժանացել է «Լավագույն ռեժիսուրա» մրցանակին: 2002 թվականին բեմադրություններ է արել Ամերիկայի Միացյալ Նահանգների Բրիստոլ քաղաքի «Բրիստոլ Ռիվերսայդ» թատրոնում («Մոռանալ Հերոստրատին»):

1992 թվականին Արմեն Խանդիկյանն առաջին անգամ հայ թատրոն է բերել «Հուլիոս Կեսար» ողբերգության բեմադրությունը, որն արժանացել է ՀՀ Պետական մրցանակի:

1996 թվականին թատրոնի խաղացանկում համալրվել է «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունը՝ Արմեն Խանդիկյանի բեմադրությամբ: 2004 թվականին Արմեն Խանդիկյանը բեմադրել է «Մակբեթ» ողբերգությունը, որով թատրոնը մասնակցել է Լեհաստանում և Հունգարիայում կայացած շեքսպիրյան փառատոններին: Արմեն Խանդիկյանը հինգ տասնյակից ավել բեմադրությունների հեղինակ է:

1990 թվականին Արմեն Խանդիկյանն արժանացել է ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի, 2005 թվականին՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչումների, 2011 թվականին՝ ՀՀ պետական մրցանակի: Պարգևատրվել է՝ «Մովսես Խորենացի» մեդալով (1997թ.), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (2016թ.):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով բեմադրիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Խանդիկյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի արվեստի

զարգացման գործում՝ առաջարկվում է Արմեն Սամվելի Խանդիկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ